

ԿՐԱՆԴ ԶՈՐԱՎԱՐԻ

(Տես Էրես 312-313.)

**Ողիսես Սիտնէյ կրանդ՝ Օհիոյ տէրութեան Գլէրմին նահանգին Բոխնդ Բլէզանդ փոքրիկ քաղաքը ծնաւ 1822 տարւոյն ապրիլի 27ին. բայց իր նախնիքը ծագմամբ Սկովտիացի էին. իր մամը հին զիւցազանց անուանց աստիկ սիրող ըլլալով, իրեն ուզելովն իժուան անունը Ողիսես դրուեցաւ. Բայց ետքը Նոր-Եօռք նահանգին Ռւէսդ-Բոխնդ քաղքին զինուորական դպրոցը մտնալով, չը դիտցուիր ինչ պատճառաւ Ողիսես Սիտնէյ կոչուեցաւ:**

Մինչեւ տասնուշորս տարուան հասակը կ'օգնէր իր հօրը խաղախորդութեան արուեստիւ. բայց շուտով երեան ելլալով իր առ զինուորական արուեստն ունեցած յարմարութիւնն ու հակամիտութիւնն, ուսողութիւն սորվելու համար Քէնդըքի նահանգին Մէջլիլ քաղքին դպրոցը դրուեցաւ. Պատանեկութեան առջի տարիներէն սկսեալ կը սիրէր իր հայրենեաց հասարակապետական կառավարութիւնը, և կը յարգէր հասարակապետութեան անուանի նահատակներն, ինչպէս գէորդ վուշնկղըն, և այլք:

1839 տարւոյն յուլիսի առջի օրը Ռւէսդ-Բոխնդի զինուորական դպրոցը մտաւ, ուր չորս տարի կեցաւ, և միշտ նշանաւոր հանդիսացաւ առ զինուորական արուեստն ցուցած սիրովն և յառաջադիմութեամբն. այնպէս որ 1843են դպրոցէն ելլալով, մէկէն կանոնաւոր բանակին հետևակազօրուն չորրորդ գրնդին տեղակալ դրուեցաւ. Երբ 1846ին Մէքսիկոյի ու Միացեալ նահանգաց մէջ պատերազմ ծագեցաւ, տեղակալն կրանդ՝ Վերագրուսի և ուրիշ պատերազմաց ու Մէքսիկոյ մայրաքաղաքին յարձակման մէջ արիութեամբ և խելքով պատերազմելով՝ փառաց դափնիներ ժառանգեց. և նոյն իսկ պատերազ-

մի դաշտին վրայ, առաջին տեղակալ և պահապետ զօրաց (Quartermaster) անուանեցաւ. և հինգ բարձրաստիճան սպաներ ու զօրավարներ իրենց պաշտօնական գրութեանց մէջ գովեցին կրանդին ցուցրցած անտեղիտալի ճիգն, քաջասրտութիւնն ու խոհեմութիւնը: Եւ երբ Միացեալ նահանգաց յաղթական ելլալովն՝ վերջացաւ պատերազմը, կրանդ՝ զնդապետի աստիճանաւ հայրենիք դառնալով հարուստ քաղաքացւոյ մը դատեր հետ ամուսնացաւ, և ետքը հրաման ընդունելով՝ իր գունդը դարձաւ յօրեկոն, խաղաղական Ովկիանուեղերաց վրայ:

Բայց իր ընտանիքէն հեռու ըլլալն, խաղաղութեան պատճառաւ դատարկ կեանքը, ու պատույ և փառաց մէջ դանդաղ յառաջանալն, ձանձրալի ըրին իրեն զինուորական վիճակը, ուստի արձակուրդ խնդրեց և ընդունելով 1854ին յուլիս 31, սկսաւ իր միխթարութիւնը ընտանի զբաղմանց ու քաղաքական արուեստից մէջ փնտուել: Ուստի դնաց նախ 'ի Սան-Լուիզ, ուր իր ազգականաց ագարակաց մէջ հողագործութիւն կ'ընէր. անկէ զնաց կալենա, ուր իր հօրը վարած արուեստին՝ խաղախորդութեան հաշուէգիրքը կը բռնէր: Եւ երբ այսպէս գոհութեամբ կ'ապրէր 'ի ծոց իւր ընտանեացը, 1861ի քաղաքական պատերազմը արծարծեց նորէն կրանդի սրտին մէջ հայրենասիրութեն և զինուորական փառաց նախանձը, ուստի փութաց նորէն հայրենեաց ծառայութեան ինքը զինքը նուիրել:

Հոս կը սկսի կրանդին զինուորական կենաց երկրորդ ընթագմը, որ շատ նոր ըլլալուն քիչ շատ ամենուն ծանօթ է, ուստի քանի մը զիսաւոր կէտերն միայն յիշատակենք: Իլլինէզի կառավարիչը զնդի մը հաղարապետ անուանեց ըզեկանդ և չորս ամիս ետքը լինքը նախագահէն կամաւորաց ջոկատի մը զօրավար դրուեցաւ, և գէրն նահանգին, (որ կիյնայ հարաւային իլլինէզի մէջ, հոն ուր Օհիոյ գետը Միախարիբի կը թափի) նիզակակից բանակին հրամա-

Նատակար եղաւ : Կրցաւ հոն իր յաջողակով եղամբն քիչ կորուսառով Ցընէլարն բերդին դէմ կոռուիլ, ուսկից ետքը կամաւորաց բարձրաստիճան զօրավարանուանեցաւ : Նոյն տարւոյն ապրիլի վեցին ու եօթին Սիրոհի արիւնահեղ պատերազմաւ յաղթեց Պէօրըկարս զօրավարին . ետքը յաղթական բանակովն վազեց հարաւային տէրութեանց վրայ, և առանց ընդմիջելու ետևէ ետև շատ մը յաջող պատերազմներ մղելով, քաջասիրտ և յամառ պատերազմէ մը ետքը Վիքսպուրկ բերդը՝ ի յանձնատրութիւն ստիպեց, և այս փառաւոր յաղթութեան արդիւնքն եղաւ 30 հազար գերի, 218 թնդանօթ, 35 հազար հրացան և Միսիսիրի գետին տիրապետութիւնը որ վաճառականութեան կարևոր դուռ մի է :

Այս յաղթութենէն ետքը կրանդ կանոնաւոր զօրաց բանակին մէջ բարձրաստիճան զօրավարի պաշտօն ունեցաւ . և նոյն պաշտօնիւ առաջ տանելով յաղթութեանց ընթացքը, շատ տեղերէն ապստամբները հալածեց : Հարիւր քաղաք իրեն շնորհակալութիւն մատուցին, և Լինքըն նախագահին առաջարկութեամբ, 1864ին մարտի 2ին զինուորական պատույ ամենաբարձր աստիճանը բարձրացուցին զինքը, այն է տեղակալ զօրավար, և նոյն ամսոյն 10ին Միացեալ նահանգաց բոլոր զօրաբանակին ծայրագոյն հրամանատար անուանեցաւ . և ահա երեք տարուան մէջ խաղախորդութեան հաշուէգիրք բռնող անձն զինուորական պատույ ծայրը հասաւ :

Հիմա կրանդ հասարակապետութենախագահ է :

### ՎԱՅՐԵՆԻ ԶԻՈՑ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ՄԵԿՍԻԿԱ

Որսորդները բլրան մը վրայ ելան, որուն գաղաթէն իրենց դիւրին էր տեսնել հորիզոնին վրայ կենդանեաց ան-

թիւ բազմութիւն մը, նկարագեղ կերպով հաւաքուած, և ամենսկին անկա սկած իրենց սպառնացող վիճակին : Մեկ սիկացիք մէկէն ձեացուցին վայրենի ձիերու մեծ շրջանը, ինչպէս որ կը կոչեն . այսինքն, ամենէն ճարտար ձիւտորներն ամեն կողմ ցրուեցան, մէկմէկէ շափաւոր հեռաւորութեամբ, մեծ բոլորակ մը ձեացընելու կերպով :

Երբոր պատրաստութիւնները լմընցան և որսորդները ցրուեցան, ամենքը ձիերնէն իջան, զանոնք ետևնէն առնելով, և բարձր խոտերուն մէջ մտան բոլորակը աւելի պվտիկցընելու համար :

Վայրի ձիերն որ մինչև այն ատեն հանգիստ կը ճարակէին՝ գլուխնին վեր վերուցին, ականջնին տնկեցին և սկսան խրխնջելով օդը շնչել : Յետոյ շատ մը մէկ տեղ ժողուելով խիտ ջոկ մը կազմեցին, և սկսան երթալ հանդարտ ընթացքով դէպ ՚ի բամբակենեաց անտառ մը՝ գետի մը եզերք :

Այն ատեն որսորդութիւնն սկսաւ : Վեց որսորդ աղէկ հեծած՝ յարձըկեցան բոլոր ուժով վայրի ձիերուն խըմբին առջև, անոնց զլիսուն վրայ սուլեցընելով իրենց ճօպանները : Ձիերն զանոնք տեսնելով զարհուրած ճամբանին փոխեցին աճապարանօք . վախով խըմբին շնջելով, և ուրիշ ճամբէ մը փախան : Բայց ամէն անգամ որ որսորդներուն շրջանակին անցնիլ կը փորձէին, ձիւորներն իրենց մէջտեղը կը յարձըկէին, և զիրենք կը ստիպէին ետ դառնալու :

Երբոր այս գործողութիւնս երկայն ատեն տեսեց և ձիերն սկսան կատաղութենէ կուրանալ, նշան մը տրուելով շրջանակն մէկ կողմէն բացուեցաւ : Ձիերը խուռն դիմեցին որոտման թաւալման ձայներով դէպ ՚ի այն մուտքը՝ որ իրենց առջևը բացուած կ'երևար, ընդոտնելով ամեն արգելք որ իրենց դէմ ելնէր : Բայց որսորդներն ալ ասոր կը սպասէին . որք ճարտարութեամբ զանոնք քշեր էին դէպ ՚ի կը ճիւմի մը բերան, երկու բաւական բարձր լերանց միջոց, որուն բերանը որսորդք 15 ոտք բար-